## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի մարտի 30-ին կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-01-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի հուլիսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ :** Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի Պայմանագրի 4.1 կետում, Պայմանագրի N1 հավելված հանդիսացող Տեխնիկական բնութագրում կատարել գնման առարկայի քանակի փոփոխություն, Պայմանագրի N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցը և Պայմանագրի N3 հավելված հանդիսացող Վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Պայմանագրի 4.1 կետի, տեխնիկական բնութագրում՝ գնման առարկայի քանակի, գնման ժամանակացույցի և վճարման ժամանակացույցի փոփոխություն:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 9.4 կետ, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 60-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 511 788, 511 787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# 30.03.2016թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԵՆԶԻՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-01-1 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք.Երևան** **« 13 » հուլիսի 2016թ.**

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Ասիկյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 60-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով 30.03.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-01-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.1 Պայմանագրի 4.1 կետում <<**19 957 850 (տասնինը միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր հիսուն)** ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<**20 941 910 (քսան միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր տաս)** ՀՀ դրամ>> բառերով:

1.2 Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող տեխնիկական բնութագրում աղյուսակի՝ <<Ապրանքի քանակը>> սյան 2-րդ տողում <<20905>> թիվը փոխարինել << 23887>> թվով:

1.3 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող գնման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N3 հավելված հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 1 փող |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02614085 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1660001996600100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ |
| Ղեկավարի ժ/պ Ռ. Ասիկյան | Տնօրեն Ա. Դանիելյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |

# ԲԵՆԶԻՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափի մանմիա վորը | Միավորի գինը | Պայմանա գիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 10-րդ աշխատան քային օրը | | II եռամսյակ՝ մինչև 20.05.2016թ. ներառյալ | | III եռամսյակ՝ մինչև 20.08.2016թ. ներառյալ | | IV եռամսյակ՝ մինչև 10.11.2016թ. ներառյալ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| [redacted] | | | | | | | | | | | | | |
| 1 | Բենզին ռեգուլյար /կտրոններով/ | լիտր | 320 | 4080 | 1305600 | 10200 | 3264000 | 10200 | 3264000 | 16330 | 5225600 | **40810** | **13059200** |
| 2 | Բենզին պրեմիում /կտրոններով/ | լիտր | 330 | 2090 | 689700 | 5225 | 1724250 | 6716 | 2216280 | 9856 | 3252480 | **23887** | **7882710** |
| **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | **20941910** |

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավարի ժ/պ՝ Ռ. Ասիկյան

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Սի Փի Էս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 1 փող
ՀՎՀՀ՝ 02614085
Հ/Հ՝ 1660001996600100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Դանիելյան

Հավելված 2

30.03.2016թ. կնքված N ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/1-01-1 պայմանագրի

13.07.2016թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ԲԵՆԶԻՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Բենզին ռեգուլյար /կտրոններով/ | 4 570 720 | 4 570 720 | 4 570 720 | 7 835 520 | 7 835 520 | 7 835 520 | 13 059 200 | 13 059 200 | 13 059 200 | **13 059 200** |
| 2. | Բենզին պրեմիում /կտրոններով/ | 2 414 528 | 2 414 528 | 2 414 528 | 4 630 230 | 4 630 230 | 4 630 230 | 7 882 710 | 7 882 710 | 7 882 710 | **7 882 710** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար [illegible]յան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

***«Սի Փի Էս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ***

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 1 փող

ՀՎՀՀ՝ 02614085

Հ/Հ՝ 1660001996600100

«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն Ս. Դանիելյան

/ստորագրություն/